ՀՐԱՎԵՐ

Պետական միջոցների բաշխման թափանցիկ և մրցակցային համակարգի գործունեության ապահովման, ազատ և մասնակցային մշակութային դաշտի կառուցման, ժամանակակից արվեստների և ստեղծարար արդյունաբերության զարգացման, ոչ նյութական ժառանգության պահպանման և տարածման, տարբեր հարթակներում հայկական մշակույթի և ժամանակակից արվեստի ներկայացման, ինչպես նաև պետական տոների և հիշարժան տարեթվերի արժևորման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի պատվերով իրականացվող մշակութային ծրագրերը կիրականացվեն մրցութային կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԿՈՄԻՏԱՍԻ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ:

«ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔՈՒՄ, ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋՈՒՄ, «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ» ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԽՄԲՈՒՄ, «ՀԻՆԳՇԱԲԹԻ» ԵՎ «ՇՐՋԱՊԱՏ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԵՐՈՒՄ:

- **Մրցույթի մասնակցության փաթեթը պետք է ներառի՝**
  - Հայտադիմում՝ համաձայն ձևաչափի (Ձև N 1),
  - Նախահաշիվ՝ համաձայն ձևաչափի (Ձև N 2),
  - Կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի վկայականի պատճենները,
  - Տեղեկանք հարկային ծառայությունից՝ հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ,
  - Տեղեկանք նախագծի համագործակցող և համաֆինանսավորող կողմերի մասին,
  - Ծրագրին առնչվող նյութեր (առկայության դեպքում)՝ լուսանկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ, էսքիզներ:

- **<u>Մրցույթին կարող են մասնակցել</u>** Հայաստանի Հանրապետությունում գրանցված շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք ունեն ժամանակակից արվեստների, մշակութային կրթության, մշակութային ժառանգության պահպանման և տարածման, մարզերում մշակութային կյանքի ակտիվացման, մշակութային զբոսաշրջության, մշակութային կյանքի խթանմանն ուղղված նորարարական և հեռանկարային նախագծեր:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ՝

- Մշակույթի բնագավառում գործունեության առնվազն 3 տարվա փորձ:
- Առնվազն 2 մշակութային միջոցառման կազմակերպման և իրականացման փորձ:
- Անցկացրած միջոցառումների վերաբերյալ հղումներ
- Համագործակցող կառույցներից բնութագիր

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- Մշակութային գործունեություն իրականացնելու համապատասխանություն /կանոնադրությամբ/
- Ներկայացված ծրագրի համապատասխանությունը պետական մշակութային քաղաքականությանը
- Հոգևոր արժեքների պահպանությանը և տարածմանը ուղղված լինելը

- Հանրության լայն շերտերի, այդ թվում և հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացման ապահովումը
- Մարզում մշակույթի ներառականության ապահովմանն ուղղված լինելը
- Նորարարական մոտեցումների և գաղափարների ներդրումը
- Միջոցառման անցկացման համար առաջարկվող թիրախային լայն խմբերի և հնարավորինս շատ մասնակիցների ապահովումը
- Համայնքների ներգրավվածությունը
- Միջոցառման բովանդակության համապատասխանությունը խորագրին
- Բյուջեի ռացիոնալ օգտագործումը
- Ծրագրի իրականացման նպատակով կամավորների ներգրավում

ՀԱՅՏԸ ԼՐԱՑՆԵԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- Հայտադիմումը և կից փաստաթղթերը պետք է լրացված լինեն հայերեն:
- Հայտադիմումի փաթեթի լրացման ընթացքում առաջացած հարցերի և խորհրդատվության համար կարող եք դիմել ՀՀ Շիրակի մարզպետարան:
- Հայտադիմումի փաթեթը ներկայացվում է մարզպետարան՝ թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով և ընդունվում է՝ մինչև մրցույթի մասին հայտարարությամբ սահմանված ժամկետի ավարտը:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ՝

- Գրավոր հարցում հանձնաժողովին
- Հարցման առձեռն ներկայացում
- Հարցման էլեկտրոնային ներկայացում

ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Հայտերը բացվում են մրցույթի մասին հայտարարության մեջ նշված ժամկետը լրանալու օրը՝ հայտերի բացման նիստում
- Յուրաքանչյուր հայտ առանձին քննարկվում է հանձնաժողովի կողմից:
- Յուրաքանչյուր հայտ գնահատվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ նախապես կազմված գնահատման թերթիկներով:
- Հայտը գնահատվում է 0-5 բալանոց սանդղակով:
- Հաղթող է համարվում հանձնաժողովի բոլոր անդամների կողմից տրված գնահատականների համագումարի արդյունքում առավելագույն միավոր ստացած հայտը:
- Մրցույթի մասնակիցը կարող է ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին:
- Հայտերը պետք է համապատասխանեն դրամաշնորհների տրամադրման հիմնական պայմաններին

ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝

- Սահմանված կարգի պահանջներին ոչ համապատասխան ներկայացված հայտերը, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում դրանք ներկայացնողներին:

ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝

- Պայմանագրի նախագիծը կցվում է

ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ՝

- Հայտերն ընդունվում են սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով:
- Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և թվով 5 կրկնօրինակից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:

➢ Մասնակից կազմակերպությունները մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը:

➢ Հայտը փոփոխվում է սույն կարգով հայտ ներկայացնելու համար սահմանված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

ՄՐՑՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Մրցույթի մեկնարկ 11.04.2019
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ 25.04.2019 ժամը 12:00
Հայտերի բացման օրը 25.04.2019 ժամը 15:00
Մրցույթի արդյունքների հայտարարում 25.04.2019
Միջոցառման անցկացման օր 30.05.2019

ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՆ

Դրամաշնորհները տրվում են միայն ընթացիկ տարվա համար և նախապես ներկայացված գումարի չափով:

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԿՈՄԻՏԱՍԻ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 500400 ՀՀ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ:

Հետադարձ կապ

Հայտաձևի լրացման, փաստաթղթերի հավաքման և որևէ այլ խնդրի հետ կապված հարցերի դեպքում դիմել հետևյալ կապի միջոցներով.

Հեռ.՝ 0312-4-90-00 *105/*107

Էլ.փոստ.՝ maghakyanani9323@gmail.com, emma.baghdasaryan@gmail.com, Shirak.mshakuyt@list.ru

Անուն, ազգանուն՝ Անի Մաղաքյան, Էմմա Բաղդասարյան, Աղավնի Հարությունյան